Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 161 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպության Սուրբ Թադեոս եկեղեցու տարածքում շինարարական, կառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպություն - Սուրբ Թադեոս եկեղեցի (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Մասիս, 1-ին փողոց, 22/1), բնագավառը՝ հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	80,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպության Սուրբ Թադեոս եկեղեցի (Հայաստանի հանրապետություն, քաղ. Մասիս, 1-ին փողոց, 22/1)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի Արարատյան Հայրապետական թեմ» կրոնական կազմակերպության Սուրբ Թադեոս եկեղեցու համար անհրաժեշտ է կազմակերպել եկեղեցու տարածքում շինարարական, կառուցման, վերա-նորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի՝ 80,000,000 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2024 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շինարարական, կառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 80,000,000 դրամ գումարի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ